



ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերությունը հիմնադրվել է 106 տարի առաջ՝ 1881 թ. նոյեմբերի 15-ին՝ Թիֆլիսում: Ընկերության հիմնադիրն ու նրա պատվավոր նախագահն է եղել բժշկապետ և հասարակական գործիչ Բագրատ Նավասարդյանը, որը և «համաձին Գաբրիել Սունդուկյանի ունեցավ վերին աստիճանի եռանդոտ, ամբողջ սրտով գաղափարական նվիրված աշխատակից»¹: Գ. Սունդուկյանն է խմբագրել ընկերության առաջին կանոնադրությունը: Ըստ այդ կանոնադրության ընկերությունը պետք է լուսավորություն տարածեր, նյութապես օգներ ինչպես Կովկասի, այնպես էլ Արևմտյան Հայաստանի ամբողջ հայությանը. նախատեսվում էր ունենալ մասնաճյուղեր բոլոր հայաշատ վայրերում: Կովկասի փոխարքան զգալով, որ բացի մշակութային և լուսավորական գործունեությունից, ընկերությունը կարող է հետապնդել քաղաքական նպատակներ, մերժեց այդ կանոնադրությունը և առաջարկեց ընկերության գործունեությունը սահմանափակել միայն Կովկասում: 1881 թվականի հոկտեմբերի 6-ին հաստատվեց ընկերության կանոնադրությունը և այն հրապարակվեց մամուլում:

Մինչ այդ բարեգործական ընկերություն հիմնելու փորձեր շատ են եղել: 1860 թ. Կ. Պոլսում արևմտահայ նշանավոր գրական-հասարակական գործիչներ նախաձեռնել էին կազմակերպել «Բարեգործական ընկերություն հայոց», որի նպատակը պետք է լիներ հայ ազգի որք ու չքավոր զավակներին օգնության հասնել: Սակայն այն գլուխ չեկավ միջոցներ չունենալու պատճառով:

Արևելահայերի մեջ այդ նույն միտքը առաջին անգամ արծարծեց Մոսկվայում հրատարակվող «Հյուսիսսփայլի» խմբագիր Ստ. Նազարյանը, որը նախ 1858 և ապա՝ 1862 թ. «Հյուսիսսփայլի» էջերում տպագրեց մի շարք հոդվածներ այդ մասին:

¹ Հայաստանի պետական կենտրոնական պատմության արխիվ, Կովկասի հայոց բարեգործական ընկերության ֆոնդ, № 28, գ. 100, թ. 5:

Ստ. Նազարյանը «Առաջարկություն մի ընդհանուր հայկական ընկերության Ռուսաստանի մէջ, վասն բարեկարգելու հայերի նիւթական և բարոյական կեանքը» հոդվածում գրում է.

«...մարդն իւր առանձնութեան մէջ, միագլուխ, իւր մասնաւոր Կարողութեան սահմանի մէջ, տկար, անգոր, այո՛, ոչի՛նչ է, բայց ընկերակցութեամբ, միաբանութեամբ իւր նմանների և հաւասարների հետ, դառնում է զօրաւոր, կարող և ճշմարտապէս մեծագործ: Ծառ հասկանալի բան է, որ անկարելին մի մարդու համար, քանի որ, նա ներգործում էր միագլուխ, իւր մասնաւոր զօրութեամբք միայն, դառնում է հնարաւոր և կարելի, և հեշտ, երբ շատերը միաբան զօրութեամբ, ձեռք ձեռքի և սիրտ սրտի տուած, օգնելով միմեանց կամէին յառաջ տանել որ և իցէ գործ: Այս տեղից ահա բացայայտ է, թէ ինչ Խորհուրդ պիտի ունենար հաստատել Ռուսաստանի մէջ մի ընդհանուր Հայկական ընկերութիւն վասն բարեկարգելու Հայերի նիւթական և բարոյական կեանքը: Ուրեմն Հայկական ընկերութեան առաջին պաշտօնը և հոգատարութիւնը կը լինի Հայոց ազգի չքաւոր զաւակներին Ռուսաստանի մէջ պատուաւոր հացի և ապրուստի ճանապարհ բանալ, ծանօթացնելով նորանց ձեռագործ արուեստների, երկրագործութեան, բնութեան բերքերի յառաջածութեան և դոցանից վաճառելի ապրանքի պատրաստութեան կերպի և եղանակի հետ, այլև կրթելով Հայոց զաւակներից պօլիտեխնիկոսք, հմուտ վաճառականք, հաշուետներին մէջ, աշտոյակ գործակատարք և գրապահք: Իսկ այն չքաւոր պատանիքը, որ ցուցանում էին քանքար և ցանկութիւն վերին գիտութիւնների պարապելու և դառնալու մի ժամանակ ուսումնականք և ուսուցիչք ազգի, դոցա օգնական կը լինի հայկական ընկերութիւնը, ապրուստ տալով և ազատելով հոգսից, որ նոքա կարողանային խաղաղ հոգով ուսանել և կրթուիլ Ռուսաստանի վերին դպրոցներում (համալսարաններում) և յետոյ պիտանի լինել իրեանց և ժողովրդին: Հայկական ընկերութիւնը Ռուսաստանի մէջ կարող է և աղքատք կերակրել և մերկեր զգեցուցանել և հիւանդներ ժողովել, բայց դոքա լինելու էին հարեանցի և երկրորդական հոգներ: Նորա գլխաւոր ուշադրութիւնը պիտի նուիրուի մի այլ գործի, որ է փակել աղքատութեան և մերկութեան ճանապարհը, դաստիարակելով և ուսուցանելով ժողովրդի չքաւոր զաւակները. դաստիարակութիւնը և ուսումը կը պատրաստէ նոցա մի ոսկի ապագայք. պատճառ, ով որ տեղեակ է մի արուեստի, հմուտ է մի գիտութեան, նա և ունի իւր ծոցումը մի ոսկու և արծաթի հանք, մի արծաթագլուխ, որ միշտ կարող է կերարկել նորան սղնքան ազնիւ պատուաւորութիւն, որ նա կամենար աշխատել, առանց գլուխ թեքելու մի ունկորի առջև ողորմութիւն մուրալու»²:

Ստ. Նազարյանի այդ միտքը իրականանում է: 1864 թ. հաքվում «Հուսիսափայլի» աշխատակից բժիշկ Դավիթ Ռոստոմյանը հիմնում է «Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը», որը միայն տեղական նշանակություն ուներ և այնտեղ հայոց գրականությունը մոռացության էր տրվում: Միայն 16 տարի հետո է այն նկատի առնվում, այսինքն աւել ժամանակ, երբ Կովկասի գլխաւոր կենտրոնում Թիֆլիսում, Բ. Նավասարդյանի նախաձեռնությամբ և Գաբրիել Սունդուկյանի աջակցութեամբ մարմին է առնում հայոց բարեգործական ընկերություն կազմելու գաղափարը:

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո տասնակ հազարավոր հայեր հարկադրված գաղթեցին Անդրկովկաս: Բժ. Բ. Նավասարդյանը 1878 թ. ավարտելով Պետերբուրգի բժշկավիրաբուժական ակադեմիան կամավոր մասնակցել է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին՝ Կովկասյան ռազմաճակատում, բժշկական օգնութուն ցույց տվել հայ զաւթականներին: 1880 թ. «Մշակ» թերթում բազմիցս հանդես է եկել հայոց բարեգործական ընկերություն ստեղծելու առաջարկությամբ: Նոր հիմնվե-

² «Հյուսիսափայլ», 1858, հունվար, էջ 272—274:

լիք ընկերության համար կազմված կանոնադրությունը, որը խմբագրել է իրավաբան Ս. Արծրունին, քննության է առնվում 1881 թ. հունվարի 4-ին, Արշրունու թատրոնում: Ըստ կանոնադրության ընկերության նպատակը չափազանց ընդարձակ էր, այն է.

Նպաստել լուսավորության տարածմանը հայերի մեջ Կովկասում և օգնել նրանց նյութականապես: Այս նպատակին հասնելու համար ընկերությունը՝ օրենքով սահմանված կարգով, իր ուժերի զարգացման համեմատ՝ պահպանում է արդեն գոյություն ունեցող հայոց ուսումնարանները, հիմնում և նյութականապես նպաստում է նորերի բացմանը, օժանդակում է ժողովրդի մեջ արհեստներ տարածելուն և նրա նյութական դրությունը բարելավելուն, օգնում է ուսանողներին ուսման մեջ, լույս է ընծայում գրքեր ու պարբերական հրատարակություններ ժողովրդի ընթերցանության համար և այլ գրական երկասիրություններ, հիմնում է տպարաններ, վիճագրատներ, թանգարաններ, գրադարաններ և ընթերցարաններ, հիվանդանոցներ, ապաստարաններ, հասարակական ճաշարաններ, թելատներ, էժանագին բնակարաններ, գիշերելու տներ, պատասպարաններ, հանրակացարաններ, աշխատանքի տներ և այլ բարեգործական հաստատություններ, օգնում է տառապյալներին ժողովրդական աղետների ժամանակ՝ սովի, տարափոխիկ հիվանդությունների, հրդեհի և այլն, որի համար յուրաքանչյուր առանձին դեպքում պատշաճավոր թույլտվությամբ բացում է հանգանակություն, կազմակերպում է սանիտարական մասնախմբեր կամ ուղարկում է իր կողմից լիազորներ, անհրաժեշտության դեպքում նյութականապես և բարոյապես օգնում է տեղական ճյուղերին, ինչպես և հայկական այլ ընկերություններին ու հաստատություններին:

Ըստ կանոնադրության, ընկերությունը զանազան տեղերում ունենում է ճյուղեր:

Ընկերության պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1881 թ. նոյեմբերի 15-ին, Արծրունու թատրոնում: Ընկերության անդամների առաջին ժողովը ընտրեց ղեկավար մարմիններ: Ժողովը բացեց Բ. Նավասարդյանը, որը բացատրեց, որ Կովկասում բարեգործական ընկերություն հիմնելու գաղափարը ստեղծել է ժամանակի ոգին, հայերի աղքատ դասի նյութական միջոցների պակասությունը, նրանց անզարգացած դրությունը: Իսկ սովատանջ և հիվանդ թուրքահայերի գաղթը դեպի Կովկաս մի վճռական մղում է Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը հիմնելու համար:

Միության ընդհանուր ժողովի նախագահ է ընտրվում բժշկապետ Միքայել Ծահ-Պարոնյանը, իսկ քարտուղար՝ Գևորգ Չմշկյանը:

1881 թ. նոյեմբերի 15-ին ընդհանուր ժողովում խորհրդի անդամներ են ընտրվում 9 հոգի, գեներալ Դիմիտրի Տեր-Ասատուրյան, Ալեքսանդր Մանթաշյան, Բագրատ Նավասարդյան, Գաբրիել Սունդուկյան, Հովհաննես Չիթախյան, Ալեքսանդր Մելիք-Ազարյան, Ալեքսանդր Անանյան, Նիկողայոս Խոսրովյան և Ներսես Աթաբեկյան: Նորահաստատ խորհուրդը հետևյալ կոչով դիմում է հայ հասարակությանը.

«Լրագիրներից Ձեզ, անկասկած, հայտնի կլինի, 1881 թվականի նոյեմբերի 15-ին Կառավարության թույլտվությամբ հիմնվեց մի մարդասիրական ընկերություն անունով՝ «Հայոց Բարեգործական ընկերություն Կովկասում»:

Ընկերության նպատակը, նրա կազմակերպությունը, իրավունքների և գործունեության սահմանները, նաև այն միջոցները, որոնցից պետք է օգտվի և որոնցով

պետք է կատարվի նա, մանրամասնորեն և որոշակի բացատրված են այն կանոնադրության մեջ, որից... օրինակ այսօր պատիվ ունենք ուղարկել Ձեր ...

Բայց որքան մեծ է մի ձեռնարկություն, որքան ընդարձակ են նրա գործունեության սահմանները, որքան բազմակողմանի են նրա ձգտումները, նույնքան մեծ պիտի լինեն և այն միջոցները, որոնց օժանդակությամբ նա կարողանա իրագործել դրանք:

Այս իսկ պատճառով՝ ընկերության նորահաստատ խորհուրդը, որը գտնվում է Թիֆլիսում, ամենայն վստահությամբ դիմում է ազգայինների, ի թիվս որոնց և Ձեր նյութական և բարոյական օժանդակությանը, խնդրելով որ Դուք բարեհաճեք Ձեր բարեկամների և ծանոթների շրջանում ստորագրություն բանալ ընկերության տարեկան և մշտական անդամներ կամ միանվագ նվիրատուներ գտնելու...»³:

Կանոնադրությունը որոշում է երեք տեսակ անդամներ, պատվավոր, մշտական և գործադիր:

Խորհուրդը իր երկրորդ նիստում որոշում է ընկերության բացման մասին հայտնել Ամենայն հայոց Գևորգ Դ կաթողիկոսին և Կ. Պոլսո պատրիարք Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանին և խնդրել նրանց օրհնությունը:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ ԾԱՅՐԱԳՈՅՆ
ՊԱՏՐԻԱՐԶ ԵՒ ՍՐԲԱՋԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գիտակ գոյով փութոյ և ըղձից Ձերոց ընդ նորահաստատ հայկական ընկերութիւնս, որոց մի և եթէ նպատակ ի բարելաւութիւն անդր առաջնորդել Ազգիս, փութամբ ահա ծանուցանել Վեհափառութեան Ձերում, զի զնոյն կէտ նպատակի և մեք առաջի աչաց ունելով՝ հիմն արկաք նորոյ բարեգործական ընկերութեանս Հայոց, որով մարթասցուք ծաւալել զուսումն ի Հայս, և օգնել նոցա ըստ ամենայն հանգամանաց բովանդակելոց ի կանոնագրութեան սորին, որք ի Կովկաս և յԱմերիկովկաս. և զկանոնագրութիւն ընկերութեանս յանդիման առնելով կատարութեան տեղոյս՝ խնդրեցաք զհաստատութիւն նորին, որ և հաստատեցաւ ի վեց յուլիսի հազար ութ հարիւր ութսուն և մի այսր ամի: Ջնես այնորիկ ի ժողով գումարեալ ըստ գորութեան կանոնագրութեան ընտրեցան քուէիւք ոգիք ինն ստորագրեալքս ի սմին Անդամք խորհրդարանի ընկերութեանս:

Ծանուցանելով զայս ի գիտութիւն և ի խնդութիւն մեծի Հայրապետիդ, և առաքելով զերկուս օրինակս անտի, խոնարհեալ խնդրեմք զերկնաձիոր օրհնութիւն Ձեր ի յաւերժ հաստատութիւն և ի բարգաւաճան նորին⁴:

Ձերումդ Վեհափառութեան
Ամենախոնարհ որդիք

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ԶՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՄԱՆԵԼԻ ԿԱՄՈՔՆ ԱՍՏՈՒԾՈՑ

Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ ԷԶՄԻԱԾՆԻ. Մեծապատիւ Անդամոց խորհրդարանի բարեգործական ընկերութեան պարոնայից Աղեքսանդրի Յովնանեանց, Նիկողայոսի Խոսրովեանց, Դիմիտրի Տէր-Ասատուրեանց, Յովհաննո Չիթախեանց, Աղեքսանդրի Մանգաշեանց, Աղեքսանդրի Մելիքազարեանց, Բազարատայ Նաւասարդեանց, Գաբրիէլի Սունդուկեանց և Ներսէսի Աթաբեկեանց՝ սիրելի և բարեպաշտ որդւոց Մայր Աթոռոյս՝ ողջոյն և Աստուածային օրհնութիւն:

Ծանաք ի յայտարար գրութիւնէ ձերմէ զբարի և զհայօգուտ նպատակ Բարեգործական Ընկերութեանդ նորոգ հիմնելոյ, զի մարդասիրական հոգւով և ջերմտանդն զգացմամբ առ լցեալ՝ խորհեալ էք գործել և հեղինակ հանդիսանալ այն-

³ Ժ. 28, գ. 1041, թ. 13:

⁴ Ժ. 28, գ. 3, թ. 1:

պիսի գործոց, որ աստուածաբանական է և առ ի յԱստուծոյ փառաւորութեամբ պատուեալ:

Օրհնեալ եղիջիք դուք, որ ըստ կարեաց հայկական ազգային օգտի և ըստ պիտոյից ժամանակիս այսորիկ ընտրեալ էք ձեռնառու լինել տարածման մտաւոր լուսաւորութեան, օժանդակ լինել քարգաւաճման արհեստից, օգնական լինել որոց նուիրեն զանձինս յուսումն. գիտութեան, միախառնել հիւանդաց և կարօտելոց, և նպաստաւոր ալլ ամենայն հաստատութեանց և միջոցաց, որովք ազգ մեր առաւել պայծառապէս փայլեցի առաջի ազգաց օտարաց ըստ բազում մասանց:

Մեծացոյս եմք, զի ամենեքին դուք գիտակ իսկ էք, թէ յո՛ր պարտաւորութիւն կապեալ է Աստուածային տեսչութիւնն զիրաքանջիւր ոք՝ տուեալ իրաքանջիւրոց ի շնորհաց և ի բարի պարգևաց իւրոց, և յո՛ր սահման կենաց վերակոչեալ, որ է կարողացն օգնել որոց կարօտին, և հմտացելոցն յամենայնի՝ առաջնորդել յուղղութիւն քարոյակամութեան: Այսպիսեօք եռանդեամբք տեսանեմք արդ զձեզ վառեալ և գօտեպնդեալ, և ուրախ եմք՝ զի որդիքդ մեր ըստ հոգւոյ ամենայն ճշմարտութեամբ գնան և յառաջադիմեն մեծաքայլ բարեաց ի բարիս և պարծանաց ի պարծանս՝ թևակոխեալ ի փառս Տեստն Աստուծոյ և ի պէտս Հայաստան աշխարհի:

Արդ օրհնեցէ Տէր զբարի նպատակ Ձեր և առաջնորդ լիցի ամենայն ուղղութեամբ ի գործս յոր ուղղին սիրտք և նպատակ ընկերութեանդ:

Օրհնեցէ զխորհրդական անդամսդ, որք ստանձնեալ էք զծանրութիւն խորհրդոց և գործառնութեանց նոցին քաղցրութեամբ և սիրով, տացէ ձեզ Տէր հաճաւոր բարի և յոյս մտաց գործել ճշմարտութեամբ, արդարութեամբ և սրբութեամբ, զի փառաւորեցիք յաստիս, և փառաւորեցին անձինք ձեր յերկինս ի յարկն արդարոց:

Ողջ լիւրութ և օրհնեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէջ. Ամէն⁵:

ԳԷՈՐԳ Դ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

թ. 478

ի 18-ն դեկտեմբերի 1881 ամի
ի Սուրբ Էջմիածին

Առ Գերագնի Ազգասէր Տեսրս

Աղեքսանդր Յովնանեանց, Չիթխանեանց, Դիմիտրի Տէր-Ասատուրեանց, Աղեքսանդր Մանթաշեանց, Աղեքսանդր Մելիք-Ազարեանց, Բագարատ Նաւասարդեանց, Գաբրիէլ Սունդուկեանց, Ներսէս Աթաբեկեանց, Նիկողայոս Խոսրովեանց

Ողջուն և օրհնութիւն ի Քրիստոս

Մեծաւ և հոգեպարար ցնծութեամբ զհինգ դեկտեմբերի անցելոյ ամի զգրեալոյ պատուական գիր ընկալեալ, փառս և մաղթանս ջերմաջերմս վերառաքելի առ Բարձրեալն Նախախնամող և պահապան վայրավատին ազգիս, որ գիտէ օգտակարս զարմանագործել յամենայն ժամ, որ և ի չարեաց իսկ բարիս արտագիտէ ի սփոփանս ժողովրդեան իւրոյ. յոր աւետեաց կազմակերպելոյ Բարեգործական Ընկերութեանդ առ հասարակ զամենեսին բերկրեցուցեալ էր, իսկ այս գիր պատուական յորում տեսանեմ զինն ստորագրութիւնս ինանց Պատուականազոյն Հոյակապ ազգայնոց մերոց ի Տփլիս, յամենայն ուրախ արար զիս և զամենայն Հայորդեալք: Օրհնեցաք զՁեզ, Տեսրք Ազգասէրք, օրհնեցաք զամենայն անդամս բարենպատակ ընկերութեանդ, Օրհնեցաք Մեծագոր Տէրութիւնդ, որ հրամանաւ իւրով վաւերացոյց զկանոնադրութիւնդ յոյժ պատուական, օրհնեցաք զհոգիս Ձեր, զսիրտս, զզգացմունս, օրհնեցաք զվաստակս Ձեր, ց'որչափ շունչ գոյ ի մեզ, այլ զի՞նչ իցէ մերս օրհնութիւն առ օրհնութեամբք բազմաթիւ անձանց, որք բարեբարեցան և որք բարեարելոց իցեն առ յապալս առ 'ի Ձեզ: Բիւրք բիւրոց օրհ-

⁵ Ժ. 28, ց. 1, գ. 3, թ. 3:

նելոց են զԶեզ ընդ Յախտենից Օրհնկոյն՝ որ, աղերսեմ, իբր անապատ օրհնութիւն բնակեցի ՚ի Զեզ, յաջողեցե՛ Զեզ, զօրացուցե՛ զԶեզ, միասիրտ միաբան պահելով զԶեզ ամէն՝:

Մնամք աղօթարար ընդ միշտ՝
Ներսէս Արքեպիսկոպոս Վարժապետեան

1882 թ. յունվարի 18-ին
՚ի ԽԱՍԱԳԻԻՂ
Կոստանդնուպօլսոյ

Դեկտեմբերին խորհուրդը միաձայն, խորին հարգանքով և մեծ համակրությամբ որոշում է դիմել Կ. Պոլսո պատրիարք նորին սրբազանության Ներսէս Արքեպիսկոպոսին ընդունել Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության պատվավոր անդամի կոչումը:

ՆՈՐԻՆ ՍՐԱՋՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՐՆ ՆԵՐՍԵՍԻ ՊԱՏՐԻԱՐԷԻ ՀԱՅՈՑ

Ի քսան դեկտեմբեր ամսոյ անցելոյ ամի ի խորհուրդ գումարեալ բարեգործական ընկերութիւնս վասն ազգի կարևոր խնդրոց, միաձայն հաւանութեամբ և միահամուռ յօժարութեամբ ամենայն գումարելոյ՝ պարտ և պատշաճ համարեցաք ընտրել զսրբազանութիւն Զեր Անդամ պատուոյ բարեգործական ընկերութեանս: Զոր խոնարհաբար յայտ առնելով սրբազանութեան Զերում, խնդրեմք թախանձանօք կրել ՚ի Զեզ զայս անուն, և օրհնել զմեզ զամենեւին ՚ի գործ և ՚ի վաստակ:

Տփխիս
1882 յունուար, 20
№ 28

Առ գերագնի և Ազգասէր Տեսարս,

Ընկալեալ ցնծութեամբ հոգւոյ զի քսան յունվարի այս տարւոյ առաքեալն առ ՚ի Զեմշ զգիր որով պատուաւոր անդամակից անուանէք զնուաստութիւն մեր նորակազմ ընկերութեանդ, փութամ այսու օրհնագիր պատասխանեալ յայտնել Զեր պայծառափալ Ազգասիրութեանց թէ ամենայն սիրով ընդունին զձերհեալն ի բարենպաստակ ընկերութենէդ զտիտղոս պատուոյ, և երջանիկ համարիմ զանձս լինել մի յանդամոց սիրայօդ եղբայրակցութեան, որ յուսամ թէ Տեսոն շնորհի ամրապնդեալ օր ըստ օրէ բազմաբեղուն արգասիս բարեացն ծնուցե՛ լրութեան Ազգիս:

Ողջունելով զԶեզ մնամ Աղօթարար
Ներսէս Արքեպիսկոպոս
10 փետրվար 1882
Խասագյուղ
Կոստանդնուպօլիս⁷

Ընկերությունը դեկավարում էին Խորհուրդը և տեղական վարչությունը: Նորակազմ խորհուրդը ամենից առաջ կյանքի է կոչում ընկերության կանոնադրության 16-րդ կետը, որը իրավունք է տալիս գավառներում ճյուղեր բացելու: Նրա դիմումը արձագանք է գտնում զանազան հայաբնակ վայրերում: Առաջին տարվա ընթացքում տեղական վարչություններ բացելու թույլտվություն են ստանում Ծուշին, Երեւանը, Մեծ Ղարաքիլիսան, Ախալցխան, Քարվանսարա գյուղը, Վաղարշապատը, Կառսը, Վլադիկավկազը, Զալալօղլին և Քութաիսը: Այնուհետև գավառների դիմումները ճյու-

⁶ Թ. 28, գ. 3, թ. 3:

⁷ Նույն տեղում, թ. 7—8:

դեր բացելու մասին ըստ տարիների ներկայացնում են զանազան պատկերներ:

1899 թ. ընկերությունը տարբեր գավառներում ուներ 21 մասնաճյուղ: Ընկերության մեջ ընդգրկվել էին հայ մտավորականության բոլոր նշանավոր գործիչները, հայ ունևոր դասը:

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերությունը նյութական օգնություն է ցույց տվել հայ գրողներին, արվեստագետներին, ուսուցիչներին, որբերին, այրիներին, բնական աղետներից տուժածներին, գաղթականներին, թոշակավորել Եվրոպայի և Ռուսաստանի համալսարանների, Ներսիսյան դպրոցի, Գևորգյան ճեմարանի կարիքավոր սովորողներին: Այդ նպատակով կազմակերպելով հանդիսավոր երեկոներ, ցերեկույթներ, մշակույթի հայ գործիչների տարեկիցներ, պարահանդեսներ, որոնցից ստացած գումարը ծախսվել է ընկերության կարիքների համար:

Բերենք մի քանի գրողների դիմումներ.

Կովկասի Հայոց Բարեգործական
Ընկերության

Խնդրագիր

Ութ տարի կա, որ ես ուսուցչական ապարեզից դուրս մղվելով, ապրում էի իմ գրչուկս, իմ գրական աշխատություններով: Սակայն այս ապարեզումն ես ես հալածանք կրեցի և իմ դասագրքերս արգելվելով՝ գրկվեցի վերջին կտոր հացից: Քաղաքում այլևս ապրելու հնար չունենալով՝ քաշվեցա գյուղ, գրկվելով երեխանց ուսումնասիրությունից և կրթությունից, բաց այս հերիք չէր, այդտեղ էլ ընկա վաշխատուների ճանկը: Այս և ուրիշը ընտանեկան հանգամանքներից ստիպված՝ մի հայտարարություն տվի, որ տպվեց «Մշակում», թե վաճառում եմ իմ գրավոր աշխատություններս հեղինակության իրավունքը հինգ հազար մանեթով՝ տարեկան հազար մանեթ ստանալու պայմանով հինգ տարվա ընթացքում: Սրա վրա ոչ ոք ուշադրություն չդարձրեց և մինչև անգամ ձախ ու ծուռ մեկնություններ ստացա զանազան խորշերում և անկյուններում: Լավ գիտեմ սակայն, որ ես այս օրը չէի ընկնիլ, եթե մեր գրողները որքան և իցե ազնիվ և անկեղծ զգացում ունենային: Վկայում եմ առաջի պատկառելի Խորհրդիդ և թող իմ այս վկայությունը մի հիշատակ մնա Ձեր գրավոր գործերում—որ մեր ժամանակի գրականությունը ապականված է զգվելու չափ, դրանում խեղդված է խղճի և ճշմարտության ձայնը: Չպատկանելով մեր գրական խմբակներից ոչ մեկին, այսօր ինձ հալածելու ամենքն էլ համամիտ և համաձայն եմ:

Երեսուն տարուց ավելի է, որ ես ծառայում եմ մեր ազգային գրականության և դաստիարակությանը՝ ոչ թե գլխապահության համար քարշ գալով սրա և նրա ետևից, այլ անկախ և ինքնուրույն կրելով ամեն տեսակ զրկանքներ և նեղություններ, մշակելով մի բոլորովին խոպանացած անդամս: Մեծ ցավ կլինի ամեն անկեղծ սրտի համար, եթե հայ ազգը ապերախտ գտնվի դեպի յուր շահերին նվիրված զավակները: Ժամանակ է օրինակ ստնել մեռելությունից հարություն առած ազգերին, իմանալ, թե որպիսի երախտագիտությամբ են հասել դրանք այդ աստիճանին, այդ բարօրությանը: Մեր ամենամեծ պակասությունն այն է, որ չենք գնահատում, չենք պատվում մեր բարերարներին, այն անձինքներին, որոնք իրանց անձն ու զանձը չեն խնայում ազգից: Մենք սովոր ենք դրանցից մեկին խեղճ, մյուսին փառասեր անվանելու: Այսպես չեն մյուս ազգերը, նրանք փառավոր արձան են կանգնեցնում թե հետին ձկնորսի համար, որ չի խնայել իր անձը հազար ու մի արկածների մատնել իր հայրենիքի սիրտ համար և թե այն մարդու, որ իր գանձով բարեգործական հաստատություններ է հիմնել: Աչքովս տեսել եմ ես Աթենքի ազգային լեռնգարանը, ուր և թափել եմ ամենահորդ արտասուք, համեմատելով իմ ազգի ապերախտությունը այս ազգի անսահման երախտագիտության հետ: Առաքի՜նությունն չի կարող աճել այնտեղ, ուր նա ոչ միայն չի գնահատվում, այլև հալածվում է:

Մինչ այսօր եւ ոչ մի բարերար, ոչ մի մեկեմաս ունեցած չեմ, ինչ որ կամ, ինձանով եմ եղել, ինչ որ արել եմ, իմ ներքին, հոգեկան տրտմիցն եմ արել: Բայց այսօր թեև ոչ հոգով ու սրտով, ոչ խելքով ու մտքով, այլ ֆիզիկապէս ծերացել եմ, նյութական անապահովությունից չափից դուրս ճնշվել, շատ անգամ թուղթ ու թանաք անգամ չեմ ունենում: Ոչ այնքան իմ, որքան իմ զավակներու սիրույն համար ստիպված եմ իմ այս դատն հանգամանքը Ձեր առջև դնելու, հուսալով, որ դուք մի ելք կգտնեք, եթե ընկերության ծրագրից և կանոններից դուրս չեք համարել ինձ պենսիոնի վրա ուշադրություն դարձնելը: Ինձ հարկավոր է այժմ միանվագ նպաստ միմչև հինգ հարյուր շանթ, որի փոխարեն ես կարող եմ ընկերության կարգադրության համձնել զանազան գրքեր իմ աշխատություններից: Իմ ներդրումն ատժամանակյա է, ես հույս ունեմ, որ շուտով դուրս կգամ այս ինձ համար անպասելի թշվառությունից և լավ օրերի՝ կարծամանամ: Ես նույնիսկ էջմիածնին մեծ ծառայություն եմ արել թե իբրև խմբագիր «Արարատ» ամսագրի և թե բարեհոգեկամ նրա տպարանը: Գևորգ կաթողիկոսը գնահատեց իմ աշխատությունը և Հայրական խնամք էր տանում ինձ վրա: Հույս ունեմ, որ նրա արժանավոր հաջորդներն եւ անուշադիր չեն թողնի իմ վիճակը...:

Մնամ խոնարհ ծառա

Ղազարոս Աղայան⁸

12 դեկտեմբերի 1892 ամի

1 փետրվար 1899 թ.

Թիֆլիզ

Կովկասի հայոց բարեգործական ընկերության
պատ. վարչությանը

Գտնվելով այնպիսի նեղ. դրության մեջ, որ ինձ ստիպում է դիմել Ձեր օգնությանը, սրանով խնդրում եմ նպաստել ինձ պ. Ս. Ծահադիզի՝ կարոտ գրողներին հատկացրած գումարից՝ գոնե 200 ռուբլով, որպեսզի կարողանամ վճարել ապրելու համար արած պարտքերս:

Բարեգործական ընկերությունը իր տրամադրության տակ ունի կարոտ գրողներին տալու մի գումար: Իբրեւ Կովկասի հայ գրողներից մեկը, դիմում եմ, և ես հույս ունեմ, որ պատ. վարչությունը չի մերժի և չի զլանա ազատելու ինձ այս դժվար կացությունից:

Հարգանքով

Վրթանես Փափազյան⁹

Կ.Հ.Բ.Ը. պատվավոր նախագահ Բ. Նավասարդյանը մեծ տեղ է հատկացրել նաև առողջապահության հարցերին: Կազմակերպել է հրապարակային դասախոսություններ, սանիտարական խմբեր՝ համաճարակի դեմ պայքարելու համար, դեղորայքով օգնել հիվանդներին, բացել հիվանդանոցներ: Ընկերությունը 1885 թ. Գորիում բացել է աշակերտական հանրակացարան, 1898 թ. Ալեքսանդրապոլում և 1899-ին Կաղզվանում՝ կարունկի արհեստանոցներ:

Ընկերությունը իր հաշվին պահել է 100-ից ավելի դպրոց, գրադարան-ընթերցարաններ: 1894 թ. Թիֆլիսում բացված գրադարան-ընթերցարանը ուներ գրականության հարուստ հավաքածու:

Մեծ է Բարեգործական ընկերության դպրոցական խորհրդի գործունեությունը: Նա կարոտ ուսումնարաններին և ուսումնառուներին տալիս էր

⁸ Ժ. 28, ց. 1, գ. 784, թ. 1:

⁹ Ժ. 28, ց. 1, գ. 57, թ. 4:

միանվագ կամ ամսական նպաստներ: Առաջին տարեշրջանում միանվագ նպաստ են ստանում բազմաթիվ ուսումնարաններ և 25 աշակերտ ու աշակերտուհիներ: Գնալով ավելանում էր նպաստ ստացող աշակերտների թիվը և նրանց տրվող նպաստի չափը:

1888 թվականին խորհուրդը որոշում է մեկ լիաթոշակ ուսանող պահել բարձրագույն դպրոցում, հատկացնելով տարեկան 360 ռուբլի: Այդ թոշակը հատկացվում է Դորպատի համալսարանի պատմական-լեզվաբանական ֆակուլտետի ուսանող Փարսադան Տեր-Մովսիսյանին (հետագայում՝ Մեսրոպ եպիսկոպոս), որը ուսումնալարտելուց հետո գնում է կատարելագործվելու՝ մինչև 1893 թ. խորհրդից ստանալով տարեկան 600 ռուբլի: Խորհրդից ամսական 50 ռուբլի թոշակ է ստանում Գերմանիայում սովորող Գարեգին Սարկավագ Հովսեփյանը (կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո): Բազմաթիվ են այն մարդկանց անունները, որոնք բարեգործական գումարներով եվրոպական համալսարաններում բարձրագույն կրթություն են ստացել:

1899 թ. մարտի 22-ին բարձրագույն հրամանով սահմանված էր և պահանջվում էր, որ հայկական ծխական դպրոցներում ուսուցիչներ և վարժուհիներ պետք է նշանակվեն միայն օրինավոր ցենզ ունեցողները, բացառություններ կարող էին տեղի ունենալ կաթողիկոսի թույլտվությամբ միայն 5 տարվա ընթացքում: Նշանակված ժամկետը լրանում էր 1894 թ. մարտի 22-ին: Այդ կարևոր ու կենսական հարցը մտահոգության առարկա էր դարձել Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության Խորհրդի համար, որը որոշում է բացել ուսուցչական դասընթացներ և այդ նպատակով դիմումներ է հղում հայ հասարակության տարբեր խավերին:

Խորհուրդը դիմում է Ս. Էջմիածնի Մայր Աթոռին: Խրիմյան Հայրիկը դեռևս տեղ հասած չլիներ պատճառով՝ 1893 թ. ապրիլի 21-ի գրությամբ գրավոր իր գոհունակությունն է հայտնում կաթողիկոսական տեղապահ Երեմիա արքեպիսկոպոսը:

Խրիմյան Հայրիկը Ս. Էջմիածնի հասնելուն պես մեծ բարեհաճությամբ վերաբերվեց խորհրդի ձեռնարկումներին և գրեց հետևյալ օրհնության կոնդակը.

Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն պապրիարք համազգական նախամեծար պթոոյ Արարատեան Առաքելական մայր եկեղեցւոյ Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի:

Մեծապատիւ և Բարեւել՝ նախագահի՝ և անդամոց խորհրդոյ Բարեգործական Ընկերութեան Հայոց Կովկասու հարազատաց և սիրելի որդոց Մայր Աթոռոյս՝ և մեր ողջոյն և օրհնութիւն:

Ընկալեալ գգրութիւն Խորհուրդոյդ և զնամակ նախագահիդ Պ. Աղեքսանդրի Յունանեան, ի ձեռն քարտուղարի խորհրդոյ Պ. Համբարձումայ Առաքելեան, ծանեայ զբարի միտն և զնպատակ Ձեր, ընդ որ մխիթարեցայ ՚ի սիրտ և ՚ի հոգի: Ոչ մնացի անուշադիր առ ուսուցչական խնդիրս, սակայն որքան միտք իմ վատնակէին ընդ յոժնումն անհրաժեշտ խնդրոյն, նոյնչափ դժուարութիւն գործոյս տազնապեցուցանէր զիս: Եւ ահա մտիկ յայսպիսի հանգամանս փութացտ հասանիլ յօգնութիւն իմ խորհուրդ Բարեգործական Ընկերութեանդ: Գոհ եմ յոյժ, սիրելի որդիք մեր, զի ինքնադորոք սիրով կապաք յանձինս լցուցանել զմասն պարտեաց իմոց քաջ իմացեալ զի անմարթ է միայնոյ անձի ՚ի կատար անել զամենայն պէտս և զկարիս ազգիս և եկեղեցւոյս: Ուստի մխիթարեալ յոյժ ընդ առաջարկութիւն Ձեր, գրեցաք մեծապատիւ թոշկապետի Միքայելի Ծառ-Պարոնեան յանձնել զմուրհակ

2000 թուրեաց խորհրդրոյոյ: Գիտեմ զվաստակս ըղձից Ձերոց և ջանից, զոր արդիւնաւորէք անկեղծութեամբ յօգուտ և 'ի յառաջադիմութիւն բազմաթիւ կարօտեղոց ազգիս և զանազան պարագայս, որպէս զարդիս զօգուտն և զպահպանութիւն եկեղեցական դպրոցաց մերոց 'ի ձեռն պարտաճանաչ և բամբիմաց ուսուցչաց, զոր յաւէտ խրախուսել սրբազան պարտաւորութիւն մեր համարիմք:

Ուստի այսու Հայրապետական կոնդակով մերով գովեմք զգեղեցիկ նպատակ և զվաստակաւ և յորդորեմք քաջալերել և աջակցել միմեանց, աշխատ լերուք քաջութեամբ տանել ամենայն դժուարութեանց և յաղթել արգելանաց և օր աւուր յաւելոյ 'ի բարեգործութիւնս Ձեր: Այսու նպատակաւ պատուիրեմք սիրելի որդւոյդ մերոց զ2000 թուրիս, զորս ունիք ստանալ 'ի գործ դնել ամբողջապէս վասն հաստատութեան դասընթացից ուսուցչաց 'ի զանազան կենդրոնատեղիս ապահովս յամառնային ջերմութեանց՝ այն է, յԱխլցիսայ, յԱլեքսանդրապօլ և 'ի Ծուշի, և մի յարմար համարիք Բարեգործական Ընկերութեանդ դարձուցանել 'ի Ձեզ զմի հազար թուրիս տուեալս 'ի դրամոց Ընկերութեանդ, իբր փոխարինաբար վասն նոյն գործոյ:

Եւ քանզի բազմաճիւղ է արդիւնաւոր գործունէութիւն Ընկերութեանդ ըստ միջակահին և ըստ բարոյականին, Հայրիկն Հայոց բոլորով սրտիս և բովանդակ մտօք օրհնէ զԲարեգործական Ընկերութիւնդ և զհիմնադիրս դորին և զխորհուրդդ և զնախագահդ և զանդամս դորին և զպաշտօնեայս, զամենայն մուխրատուս և զամենայն գործաւորութիւնս Ձեր, որք 'ի պէտս Հայաստան ժողովրդեան: Եւ հաւատամ թէ տարածեալն յամենայն հայաբնակ տեղիս հազուադիւր Բարեգործական Ընկերութիւն Ձեր՝ Մեզ յոյժ սիրելի և փափագելի, հաճելի քան զբազումս ամենայցելու Աստուծոյ բարերարին և բազումողորմին, որ ծագէ զոյսս ի յամենայն տեղիս, իբրև զգործ իւր սեփական, ինքնին հովանաւորեսցէ և պահապանեսցէ զԲարեգործական Ընկերութիւնդ ընդ երկայն աւուրս անխափան և յարատեւ յառաջադիմութեամբ: Եւ 'ի փոխարինութիւն ջանից Ձերոց երկնային Բարեգործն հատուցէ Ձեզ պարգևս երկնային-զմիխարութիւն բարոյական արդեամբք ընկերսիրական և հնչյափրական աշխատութեանց Ձերոց:

Ողջ լերուք և օրհնեալք յԱստուծոյ, և 'ի սրբոց մորա և 'ի Մէնջ: Ամէն՝:

Մկրտիչ կաթողիկոս ամենայն Հայոց

Յամի փրկչին 1893, յ8 դեկտեմբերի

և ըստ Տոմարի ՌՅԽԲ, թիւ 510

յԱրարատեան Մայր Աթոռս, ի Ս. Էջմիածին, ի Վաղարշապատ

Կաթողիկոսական կոնդակը մեծ պարտավորութիւնն է դնում Կովկասի Հայոց բարեգործական ընկերության վրա, համաձայնելով նրան հայ ուսուցիչների պետական ուսուցչական իրավունք ձեռք բերելու կարևոր գործը: Հատկացվում է նաև պատկառելի մի գումար, կազմակերպելու համար կանոնավոր դասընթացներ, որոնց մասնակիցները ուսուցչական ցեղն ձեռք բերելու համար համաձայնում էին պահանջվող քննություններ:

1893—1899 թթ. ձեռնարկվում է այդ կարևոր աշխատանքը և Թիֆլիսում, Ախալցխայում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Ծուշիում բացվում են ուսուցչական դասընթացներ: 1893 թ. ԿՀԲԸ աշխատանքներ է տանում Թիֆլիսում բացելու կենտրոնական գրադարան, որի կանոնադրությունը կազմելու համար ստեղծվում է համաձայնողով հետևյալ կազմով. Ալ. Ծիրվանզադե, Խ. Մալումյան, Տիգրան Հովհաննիսյան, Ստ. Լիսիցյան, Ստ. Մալխասյան: 1894 թ. ընկերությունը բացում է իր կենտրոնական մատենադարան-ընթերցարանը, որը նպատակ է ունեցել ի մի հավաքելու կովկասագիտության և մասնավորապէս հայագիտության վերաբերյալ նյութեր և սպասարկել հայ հասարակությանը:

Գեներալ-ադյուտանտ Մելիքովի հաստատած կանոնադրության հիման վրա ընկերությունը գործում է մինչև 1899 թ., երբ այդ կանոնադրությունը, ի մեծ վիշտ հայ ժողովրդի, փոխարինվում է մի մոր կանոնադրությամբ: Հին կանոնադրությամբ ընկերությունը կրում էր «Հայոց բարեգործական ընկերություն Կովկասում» անունը և մոր կանոնադրություն մտցնելու միջոցին ուներ 19 բաժանմունք՝ Կովկասի զանազան վայրերում, իսկ ընկերության գործունեությունը արտահայտվում էր տարրական, միջնակարգ և բարձրագույն դպրոցներում սովորողներին թոշակ տալու, էժանագին ճաշարաններ, գրադարաններ, ընթերցարաններ պահելու, չունտրներից մշտական օգնություն հայթայթելու, խոլերայի ժամանակ Կովկասի բնակչությանը բժշկական օգնություն հասցնելու համար բժշկական-առողջապահական խմբեր կազմակերպելու և այլն:

Նոր կանոնադրությամբ ընկերության այս ամբողջ կրթական-մարդասիրական գործունեությունն անցնում էր Կովկասի փոխարքայի հսկողության տակ, որին ամեն տարի ներկայացվում էր օրենքով և շրջաբերականներով պահանջվող հաշվետվություն:

1899 թ. ներքին գործերի մինիստրության հաստատած մոր կանոնադրությամբ ընկերությունը զրկվում է բաժանմունքների ունենալու իրավունքից: Ուստի և բոլոր 19 բաժանմունքները փակվում են: «Հայոց բարեգործական ընկերությունը Կովկասում» վերակազմվում է՝ դառնալով «Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերություն»: Նոր կանոնադրությունը հաստատվում է 1899 թ. հուլիսի 6-ին: Ընկերության գործունեությունը դրվում է ամենամեղ շրջանակների մեջ:

Ընկերության վարչությունը այդ շրջանում զբաղվում է կանոնադրությամբ որոշված աղքատախնամության զանազան ձևերով: Տալիս է երկու տեսակ աղքատախնամ մականուններ՝ մշտական և միանվագ: Միևնույն ժամանակ վարչությունը սկսում է աշխատանքներ տանել ընկերության հին կանոնադրությունը վերականգնելու ուղղությամբ: 1907 թ. վարչությունը խնդրագիր է տալիս Կովկասի փոխարքային, որ «ամբողջ Կովկասի հայ ազգաբնակչությունը փափագում է վերականգնած տեսնել հայոց բարեգործական ընկերությունը իր նախկին կանոնադրությամբ»¹¹:

Ժամանակի իրադրությունից թելադրված տրվում է թույլտվությունը: Վարչությունը մշակում է մոր կանոնադրություն, որը ընդհանուր ժողովում անփոփոխ հաստատվում է 1908 թ. հունվարի 31-ին:

2 օր հետո՝ մայիս 1908 թ. փետրվարի 2-ին, կայանում է ընկերության առաջին ընդհանուր ժողովը 128 անդամների ներկայությամբ, նախագահ է ընտրվում բժ. Բ. Նավասարդյանը, քարտուղար Աշոտ Աթանասյանը: Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը մորից կյանք է առնում, վերականգնում է իր գործունեությունը, որը իր երկարամյա գոյության ընթացքում մեծ համակրություն էր գտել ամենուրեք:

Այսպիսով, վերաստեղծվում է «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը»՝ իր բազմաթիվ ճյուղերով, ընդարձակ գործունեության սահմաններով, որով այն հնարավորություն է ստանում սոսկ բարեգործությունից անցնել մշակութային գործունեության:

Ընկերությունը վերստին իր ճյուղերը բացում է Կովկասի հայաբնակ բաղաքներում ու գյուղերում: Նրա շուրջն են համախմբվում հայ ժողովրդ-

¹¹ Ժ. 28, ց. 1, գ. 101, թ. 52:

դի աչքի ընկնող ներկայացուցիչներ, գրեթե Կովկասի գրական և հասարակական բոլոր գործիչները՝ առանց քաղաքական-հասարակական հայացքների խտրության:

Անցյալ շրջանից մնացած երկու հիմնարկությունները՝ որքանոցը և ճաշարանը, շարունակում են իրենց գոյությունը, սովորական աղքատախնամությունը մույնպես մնում է իբրև գլխավոր ճյուղերից մեկը, որոնց ավելանում են ընդարձակ դպրոցական գործունեություն, գրադարան-ընթերցարան, գրական ֆոնդ, հրատարակչական գործ և այլն:

Խորհուրդը բաղկանում է 12 անդամից, բաց գործունեությունը բոլոր ճյուղերում լայն թափով առաջ տանելու նպատակով ստեղծվում են հատուկ մասնաժողովներ, որոնք կազմվում են խորհրդի անդամներից և դրրսից հրավիրված ձեռնահաս անձներից: Այսպես, կազմակերպվում են հետևյալ մասնաժողովները՝ ճաշարանի, որքանոցի, գրադարան-ընթերցարանի, ֆինանսական, կալվածական, նպաստամատույց, գյուղատնտեսական, գրական ֆոնդի, հրատարակչական, ներկայացուցիչների և երեկույթների, թուրքահայ գաղթականների (հետագա տարիներին ավելանում են նաև մասնաժողովներ, հանձնաժողովներ, լիազորներ և այլն):

1908 թ. խորհուրդը, 1881 թ. խորհրդի մամ, անմիջապես դիմումներ է ուղարկում Կովկասի և Անդրկովկասի հայաբնակ վայրերը՝ ընկերության ճյուղեր բաց անելու համար: Խորհուրդը վերակազմվում է փետրվարի 2-ին, իսկ մարտի 28-ին արդեն բացվում է 18 ճյուղ հայաբնակ քաղաքներում և գյուղերում: 1908 թ. վերջին ընկերությունն ուներ 40 ճյուղ (հետագայում այդ թիվը մեծանում է):

Ընկերության տեղական ճյուղերը այս երրորդ շրջանում ավելի քան երբեք կարևոր ծառայություն են մատուցում ընդհանուր մարդասիրական-մշակութային գործին և այս հասկանալի է, երբ նկատի ունենք, որ առաջին շրջանում խորհրդին աջակցում էին 19 ճյուղեր, միևնույն երրորդ շրջանում (մինչև 1911 թ.) ընկերությունն ուներ 45 ճյուղ: Խորհուրդն իր նպաստները տեղական ճյուղերի միջոցով բաժանում էր դպրոցներին: Խորհրդին աջակցում և իրենց նպաստն են բերում բոլորը: Ահա մի նմանակ Ալ. Մանթաշյանից.

«Ստացա պատվարժան խորհրդի 18 հունիսի նամակը՝ Կովկասում վարժարաններ բաց անելու հարցի վերաբերյալ: Ես արդեն գրած եմ Թիֆլիսի մեր գրասենյակը, որ 20000 ռուբլու անվանական արժողությամբ Кредитное общество-ի օրիգինալներ գնեն և հանձնեն Խորհրդին, որպեսզի այդ դրամագույնը անձեռնմխելի պահելով, տոկոսը (տարեկան 200 ռուբլի) գործածե մեր բացվելիք դպրոցների համար:

Խորապես շնորհակալ եմ այն զգացմունքների մասին, որ պատվարժան Խորհուրդը արտահայտում է իմ նկատմամբ, իր վերոհիշյալ գրությամբ:

Ալեքսանդր Մանթաշյան¹²:

14 հուլիսի 1908 թ., Փարիզ

1910 թ. ապրիլի 24-ին Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության ընդհանուր ժողովը որոշում է «Աղերսել Նորին Վեհափառության, որ նա լինի բարձր հովանավորող անդամ ընկերության, մանավանդ, որ նրա արտին միշտ մոտ է եղել մեր ընկերության գործունեությունը»: Իզմիրյան

¹² Նույն տեղում:

Մատթեոս Բ. կաթողիկոսը ի պատասխան այդ ընտրության, ուղղում է խորհրդին հետևյալ հայրապետական կոնդակը.

Գերագնի մախագահաց ընդհանուր ժողովոյ և խորհրդի և պատուական տեսարց անդամոց Բարեգործական Ընկերության Հայոց Կովկասու, հարազատ և հաստատարիմ որդոց մօրս լուսոյ Ս. Էջմիածնի բազմասցի շնորհ, սէր և ողջոյն փրկչաւանդ հաճեկը հայրապետական օրհնութեամբ:

Գոհումակութեամբ ընկալաք զհետագիւր սիրեցեալ առ ի մէջ որդոցդ ի 25 ամեանն ապրիլի, յորմէ իրազեկ եղաք, եթէ ընդհանուր ժողովն Բարեգործական Ընկերութեանդ Հայոց Կովկասու որոշեալ է համարել զՀայրապետն լրութեան Ազգիս պատուաւոր անդամ Հովանաւորող Ընկերութեանդ:

Հոչակ քեղմնաւոր և արդիւնաշատ գործունէութեան Բարեգործական Ընկերութեանդ ի սկզբանէ անտի ցալսօր քաջայայտ է մերագնեայ ժողովրդեան, զի պատկառելի հաստատութիւնդ, բազմաթիւ ճիւղաւորութեամբ իւրովք, ընդ հովանեաւ բարեխնամ պետութեան Ռուսիոյ, շնորհիւ բարեմիտ և գիտակից անձանց ձեռն օժանդակութեան կարկաւէ յամենայն ժամ բազմաթիւ դժբախտ անձանց, չքաւորաց, ուսումնաստեմէ պատանեաց և առհասարակ ամենայն կրթական և հանրօգուտ ձեռնարկութեանց և հաստատութեանց, որով մեծապէս նպաստէ մտաւոր և բարոյական յառաջդիմութեան և երջանկութեան Ազգիս:

Արդ՝ ընկալեալ Մեր գորոշումն Ընդհանուր Ժողովոյ սոյնպիսի բազմաթիւն Ընկերութեանդ վասն կոչման պատուաւոր Հովանաւորող անդամութեան Մերոյ, որ ի յարգանս Հայրապետութեան Ամենայն Հայոց, այսու Հայրապետական Կոնդակաւ մերով յայտնեմք սիրելի որդոցդ զսրտագին գոհումակութիւնս Մեր հաճեկը օրհնութեամբս, մաղթեմք առ Տէրն տէրանց ի հաճոյս իւր ընդունել զբոլորաւոր վաստակս Մեծայարգ անդամոցդ և պարզեկ բազմավաստակ սիրելեացդ զիմաստութիւն, զեռանդ բարեգործութեան և զքաջատոյջութիւն՝ մովին սրտաբոխ տաւանդեամբ և անձնուիրութեամբ շարունակել զքեղմնաւոր գործունէութիւնն Զեր յօգուտ տաւապեալ ազգիս:

Ողջ լերութք, զօրացեալ ի Տէր, պահպանեալ ի խնամս Հօրն երկնաւորի և օրհնեալ ի Մէջ. Ամէն¹³:

ՄԱՏԹԷՈՍ Բ. Կաթ. Ամ. Հայոց

2 Մայիսի 1910 ամի և ըստ տոմարիս ՌՅԾԹ

Ի Հայրապետութեան Մերում Ա. ամի

յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ

Թ. 1192

1908 թ. գալստնելում տարածված հիվանդությունների առաջն առնելու համար ընկերությունը դեղորայք է բաժանում աղքատներին, մյուս կողմից օգնում է դպրոցներին, բաց է անում ջուլհականոց-արհեստանոց, կազմակերպում է դասախոսություններ, ժողովրդական ներկայացումներ, կառուցում ժողովրդական տուն և այլն:

1911 թ. ապրիլի 19-ին Պետերբուրգում 69 տարեկան հասակում վախճանվում է Կ.Հ.Բ. ընկերության հիմնադիր-բարերար և պատվավոր անդամ Ալեքսանդր Մանթաշյանը, որը սերտ հարաբերության մեջ էր Ս. Էջմիածնի հայրապետների հետ:

Նա նպաստել է Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը, 10000 ռուբլի է տվել Թիֆլիսի հայոց նպաստամատույց հանձնաժողովին, նրա դուռը բախող հարյուրավոր գիտության ծարավի երիտասարդներ նրա հաշվով բարձրագույն կրթություն են ստացել:

¹³ Նույն տեղում:

Նրա նվիրաբերությամբ են իրագործվել՝ Պարիզի հայ տաճարի շինությունը, Թիֆլիսի վանքի տաճարի վերանորոգությունը, սկսած է Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգությունը և շքեղ վեհարանի շինությունը:

Մանթաշյանը գորգորանքով է վերաբերվել իր ազգի կուլտուրական գործին և սիրով Ներսիսյան դպրոցի մոր շենքի կառուցման ամբողջ ծախսն իր վրա վերցրել¹⁴:

Հայոց Մայր Աթոռը՝ Ս. Էջմիածինը, աշխարհասփյուռ հայերի սրբազան դրոշակն է, ուխտի տապանակը, միության կապը:

Այլ Մանթաշյանը իր սրտով ըմբռնեց ազգային խաչապսակ դրոշակի նշանակությունը և իր նպաստը բերեց նրա հավերժությանը:

1911 թ. Վ.Հ.Բ.Ը. ուներ 45 տեղական բաժանմունք 236800 ուրբ. նյութական կարողությամբ: Ընկերությունը պահում էր 140 դպրոց, հրատարակում հայերեն գրքեր և անվճար դասագրքեր:

Ընկերության տպարանի հրատարակած գրքերը նպաստել են հայերի ազգային զարթոնքին, մշակույթի զարգացմանը: 1911 թ. հանդիսավոր պաշտամունքում նշվել է Վ.Հ.Բ. ընկերության 30-ամյակը և հրատարակվել պատմաբան Լեոյի պատրաստած «Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում 1881—1911» գիրքը՝ բաղկացած 360 էջից:

Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը բեղմնավոր գործունեություն է ծավալել առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո:

Գաղթականների հսկայական զանգվածներ, լքելով հայրենական օջախները, դիմում էին գաղթի: Ուստի հայ ժողովրդի համար ստեղծված կացությունը ընդարձակում էր ընկերության անելիքները: Նա լծվում է աշխարհիստանի հայ ժողովրդի որբահավաքի աշխատանքին, օգնության ձեռք մեկնում որբին, անտունին, վիրավորին, անօթևաններին: Որպեսզի կազմակերպած կերպով կատարի գաղթականներին ցույց տրվող օգնությունը, ընկերության կից կազմակերպվում է գաղթականներին օգնող հայկական Կենտրոնական կոմիտե, որտեղ ընդգրկվում են այդ նպատակին ծառայող նաև այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

«Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության
խորհրդին

Թիֆլիզ

29 դեկտեմբեր 1914 թ.

Ռուս-ուսական պատերազմի վերջին դիպուածների առթիւ Ընկերութեան Արմավիրի միջին Վարչութիւնը տեղւոյս այս հասարակութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ մի քանի խորհրդակցական ժողովներ է գումարել, թե պատերազմի արհաւիրքներից փախստական ազգայիններին ինչ ձևով կարող է օգնել Ընկերութեան Արմավիրի միջին և թէ որպիսի օգնութիւնը ներկայ պարագաներում իրական նպաստ կլինի թշուառներին և մեր հայրենիքին:

Այդ խառն ժողովները յանգել են այն եզրակացութեան, որ Բարեգործական ընկերութիւնը, հայ հասարակութիւնը և ազգային հաստատութեանց ներկայացուցիչները միահամուռ ուժերով ամէն ջանք պէտք է գործադրեն, որ գաղթականութեան հոսանքը մեր բնիկ երկրից չտարածուի հեռուն՝ դեպի հիւսիս ու այլուրեք, որպէսզի հայրենիքը ամայի և անմարդաբնակ չմնայ ու ժողովուրդը աստանդակաւ թափառելով, բարոյական և տնտեսական քայքայման չենթարկուի:

¹⁴ «Նոր դպրոց» 1911 թ., № 15—16, էջ 32:

Այս սկզբունքով Արմավիրի հայությանը ջանադիր է, որ Արմավիրը հայ գաղթականներին հրապուրող մի ապաստարան չլինի, ուստի և Վարչությունն բոլորովին հետո է պատեղ գաղթականներ պատասխարկելու, ձրի ճաշարաններ, ապաստարաններ հաստատելու և պահպանելու մտքից:

Սակայն դժբախտաբար հայ գաղթականների հոսանքը տարածուել է հիւսիսային Կովկասում, հասել է Արմավիր և անցել անելի հեռուն, օրեցօր մեծ քաղմության է գալիս Կարսի, Սարիղամիշի, Ալեքսանդրապոլի, Արդուինի, Արդահանի շրջակայքներից, չքատրներ շատ կան, շարունակ դիմում են Բարեգործական Ընկերության և օգնություն են հայցում: Ընկերության միջոցները ինքն ըստ ինքեան շատ սուղ են և հայթաղելիք ու հայթաղյուած միջոցները սկզբունքով ուղարկուել և ուղարկուելու են պատահեւտն սարսափի վայրերը՝ Երևան, Կարս, Սարիղամիշ, Թիֆլիզ Բարեգործական Ընկերության խորհուրդին և ազգային հաստատություններին յատկապէս այն նպատակով, որ խորհուրդը և ազգային հաստատությունները ամեն ջանք գործ դնեն գաղթականության հոսանքը կանգնեցնել արհաւիրքի ենթարկուած վայրերին մերձակայ տեղերում և թույլ չտան գաղթող ժողովրդին հեռանալ Անդրկովկասից: Այդ նպատակով արդեն Վարչությունն մի քանի օր առաջ փոխադրել է հազար ուրբի Երևանի առաջնորդ Տէր Խորեն եպիսկոպոսին, այդ մասին հետագրով տեղեկութիւն տալով խորհուրդիդ և Ս. Էջմիածնի Սրբազան Սիւնոդին ի գիտութիւն: Սոյն դեկտեմբերի 20-ին ուսուցիչ Վ. Նահապետեանի հետ Վարչութիւնը խորհուրդիդ անունով ուղարկել է նաև մի հազար եօթը հարիւր ուրբու արծողութեամբ տաք հագուստներ և զանազան իրեր հայ կամաւոր զինուորների ու փախստականների համար, քաշխումը թողնելով խորհուրդիդ հացեղութեան, այդ մասն Վարչութիւնը պաշտօնական գրութիւն ու հեռագիր է ուղարկել խորհուրդիդ նախագահին¹⁵:

Փախստականներին օգնություն հասցնելու գործը, սկսած 1914 թ. նոյեմբերի 22-ից մինչև 1915 թ. փետրվար ամիսը, ամբողջովին ծանրանում է ընկերության կից ստեղծված կոմիտեի վրա: Կոմիտեն նյութական, բժշկական և այլ օգնություն է ցույց տալիս ոչ միայն հայ, այլ նաև ռուս և այլ ազգի զինվորներին: Հիվանդությունների համաճարակը անարգել կերպով զարգանում էր և խլում մեծ թվով զոհեր:

Կենտրոնական կոմիտեն անմիջապէս ձեռնարկում է բժշկա-սանիտարական օգնության կազմակերպմանը և բաց է անում մի շարք սննդականներ: Հիվանդանոցներ է բացում հետևյալ վայրերում՝ Ալեքսանդրապոլ, Կարս, Կադզվան, Ախալքալակ, Նախիջևան, Ղարաքիլիսա, Ալաշկերտ, Վան, Մանազկերտ, Մազրա և այլուր: Կենտրոնական կոմիտեն բաց է արել նաև մի շարք դպրոցներ, ինչպէս նաև որբ երեխաների համար ապաստարաններ:

Կոմիտեն փախստական արհեստավորների համար բացում է դերձակների, կազմատան, կոշկակարի, ոսկերչական և այլ արհեստանոցներ, թվով 13 արհեստանոց, 273 մարդու համար: Պատերազմական վայրերում դաշտերը ցանելու և ավերած տնտեսությունները վերականգնելու համար կոմիտեն կազմակերպել է հատուկ տրանսպորտ և այլն:

Գաւառներում ընդարձակ գործունէություն ծավալելու համար որոշված էր այնտեղ գործող ընկերության ճյուղերի ծառայությունից օգտվել, ուստի բնականաբար Կովկասի Հայոց բարեգործական Ընկերությունը և հայկական կենտրոնական կոմիտեն 1915 թ. միանում են ունենալով մեկ խորհուրդ, մեկ դրամարկղ և այլն:

Հետագա մի քանի տարիների ընթացքում խորհուրդը գլխավորապէս զբաղվել է գաղթականների պարենավորման հարցով: Նա հիմնում է ա-

¹⁵ Ծ. 28, ց. 1, գ. 110 թ. 22. 23:

ռանձին պարենավորման հանձնաժողով և պահեստներ է բացում գաղթական վայրերում: Օգնության է կանչում բոլորին:

Ահա թե ինչ է գրում պատերազմից վնասվածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտեին Ամենայն հայոց կաթողիկոսի բարձր հովանավորության ներքո գտնված եղբայրական օգնության Երևանի թեմի հանձնաժողովի նախագահ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը. 1915 թ. մարտի 6-ին Երևանից.

«Հանձնաժողովն ստացել է կոմիտեից ուղարկած 250 հատ տաք ֆուֆայկաներ, փախստականների համար: Հաղորդելով վերոհիշյալը, խորհուրդս, ի դիմաց փախստականների, հայտնում է Ձեզ իր շնորհակալությունը»¹⁶:

Ավելանում են ընկերության ճյուղերը, ավելանում է նաև ընկերության նպաստով պահվող դպրոցների թիվը: 1916—1917 թթ. ուսում. տարվա ընթացքում ընկերությունը ունեցել է 135 դպրոց: Ընկերությունը 1915—1917 թթ. հրատարակել է նաև «Համբաւաբեր» հասարակական, գրական շաբաթաթերթը, որը ունեցել է նաև հավելվածներ որք երեխաների համար և անվանացանկ փախստական որք երեխաների: Ընկերությունը իր միջոցներով հնարավորին չափ օգնել է բազմաթիվ բարեգործական միությունների, Թիֆլիզի բարեկարգմանը, օգնել նաև վրացի և այլ ազգի կարիքավորներին:

Հայաստանը դարձել էր «որբերի ու արցունքների երկիր»: Ոչ մի ընկերություն չէր կարող ամոքել հայ ժողովրդի վերքերը: Միայն ռուս ժողովրդի եղբայրական օգնությամբ է, որ հայ ժողովուրդը կարողացավ ոտքի կանգնել և իր երկրի տերը դառնալ:

Վրաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, 1921 թ. մարտի 2-ին, Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության վարչությունը որոշում է. «աչքի առաջ ունենալով, որ բարեգործական ընկերության գույքերը պատկանում են ... հայության, խորհուրդը միաձայն որոշեց ընկերության բոլոր գույքերը թե շարժական և թե անշարժ համարել Հայաստանի հանրապետության սեփականությունը»¹⁷:

Այսպիսով, 40 տարիներ շարունակ գործելուց հետո, 1921 թ. Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունը դադարեցրեց իր գործունեությունը:

Անուրանալի է նրա բերած նպաստը և թողած ավանդը հայ ժողովրդի կյանքում: Նա մեծապես նպաստել է հայ ժողովրդի հոգևոր և մշակութային վերելքին, ազգապահպանության և առաջադիմության գործին, գրականության զարգացմանն ու լուսավորության տարածմանը, դպրոցների բացմանն ու պահպանմանը, խնամել որբերին ու գաղթականներին, օգնել բոլոր կարիքավորներին, հոգ է տարել մանուկ անդաստանի անխոնջ մշակի՝ հայ ուսուցչի վիճակին ու պատրաստակամությամբ արձագանք տվել հայ մտքի զարգացման առաջապահ գիմվոր՝ հայ գրողի օգնության կանչին:

Անշուշտ ունեցել է նաև վրիպումներ, տարբեր հոսանքների ազդեցություններ:

Տարբեր ժամանակներում Կովկասի հայոց բարեգործական ընկերու-

¹⁶ Ժ. 28, ց. 1, գ. 116, թ. 64:

¹⁷ Ժ. 28, գ. 285, թ. 1:

թյան մեջ ընդգրկվել են Ա. Էջմիածնի բարձրաստիճան հոգևորականներ և միաբան հայրեր, որոնցից են՝ Գևորգ Դ, Մկրտիչ Ա, Մատթեոս Բ, Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսները, գերաշնորհ Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյան, Երեմիա արքեպիսկոպոս Գալստյանց, Գրիգոր եպ. Գառնակերյան, Ներսես եպիսկոպոս Խոդավերդյան, Սուքիաս արքեպ. Պարզանց, Մեսրոպ արքեպ. Սմբաթյանց, Արիստակես արքեպ. Սեդրակյանց, Գրիգորիս արքեպ. Աղվանյանց, Խորեն արքեպ. Մուրադբեկյանց, Գևորգ արքեպ. Չորեքչյան, Գարեգին արքեպ. Հովսեփյան, Մեսրոպ արքեպ. Տեր-Մովսիսյան և բազմաթիվ անվանի արքեպիսկոպոսներ, վարդապետներ ու քահանա հայրեր, հայ նշանավոր մտավորականներ՝ գրողներ, հրապարակախոսներ, իրավաբաններ, նկարիչներ, երաժիշտներ, բժիշկներ։ Թվեմք մի քանիսին.

Գաբրիել Սունդուկյան, Պերճ Պողոսյան, Ղազարոս Աղայան, Ալ. Ծիրվանզադե, Հովհ. Թումանյան, Վրթանես Փափազյան, Աբգար Հովհաննիսյան, Մանուկ Աբեղյան, Ալ. Ծատուրյան, Գարեգին Լևոնյան, Ավետիք Արասխանյան, Սեմեքերիմ Արծրունի, Հովհ. Մալխասյան, Ստ. Մալխասյան, Գրիգոր Արծրունի, Համբարձում Առաքելյան, Լեո, Գ. Չմկյան, Գևորգ Բաշինջաղյան և շատ ու շատ ուրիշներ։

Կովկասի հայոց բարեգործական ընկերության հարուստ արխիվը գտնվում է Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվում։ Թերթերով նրա 40-ամյա պատմության էջերը անխառն հիացմունքի և երախտագիտության զգացումով են հիշում նրա հիմնադիրներին, բոլոր տարիների ղեկավարների և անձնվեր գործիչների ու գործակիցների մատուցած անմոռաց ու բոլորանվեր ծառայությունները՝ հոգուտ հայ ժողովրդի և հայկական մշակույթի։

Հայկական սփյուռքում այդ մեծ գործը այսօր շարունակում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը, որը հիմնադրվել է Առաջին համաշխարհային պատերազմից առաջ, 1906 թ. մայիսի 15-ին, Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում, Պողոս Նուբար փաշայի կողմից։ Միության նախագահներն են եղել Պողոս Նուբար Փաշան (1906—1909)

Գալուստ Գյուլպենկյանը (1909—1932)

Զարեհ Բեյ Նուպարը (1932—1940)

Պողոս Քոլոլյանը (1940—1942)

Արշակ Գարագյոզյանը (1942—1953)

1954-ից՝ Ալեք Մանուկյանը, որն ընտրված է ցմահ։

Ինչպես գրել է իր Հայրապետական կոնդակում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը Հ.Բ.Ը. Միության 34 տարիների անփոփոխ և փաստակաշատ նախագահ Ալեք Մանուկյանին.

«Ներդրած ավերին 1906 թ. ծնունդ առած Բարեգործական Հայկական կազմակերպությունը ութսուն տարիներ շարունակ հայոց ազգային կեանքի ծոցում մնացել է հաստատ ու աներեր, առատօրեն բարոյական և նիթական բարիք բաշխելով մեր Մայր եկեղեցուն, ի սփիտս աշխարհի հայկական կրթական հաստատություններին, ազգաշեն հայրենասիրական ձեռնարկներին, մշակութային իրագործումներին, միշտ և ամենուր շինարար եղանակով, կենսունակությամբ ոգի և հայտնեմ գոյատևելու հաստք ներարկելով պանդուխտ հայության բաբախող սրտին»¹⁸։

¹⁸ «Էջմիածին» ամսագիր, 1986 ժԱ—ԺԲ, էջ 11։